


ՆՈՐ ՈՒՐԱՐԱԿԻՐՆԵՐ

17 Յուլիս 1964, Ուրբաթ երեկոյեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի Դիւսի Նշարաց նախասօնակէն առաջ, Գեւ. Լուսարարա. պէս Տ. Հայրիկ Ս. Արքեպ. Ուրարի սրչութիւնը կ'ստանայ ժառ. Վարժարանի ուսումնական դասընթացի Գ. Տարին յաջողութեամբ աւարտող հետեւեալ չորս ուսանող սաներուն, որոնք յառաջիկայ դպրոցական տարեմուտին պիտի շարունակեն իրենց կրօնական ուսումը Ընծայարանի Ա. տարւան դասընթացով:



Ժառանգաւորաց Վարժարանի չորս Ուրարակի Տիրացուները սրչութենէն անմիջապէս յետոյ, Լուսարարապէս Գեւ. Տ. Հայրիկ Արքեպ. Ի եւ իրենց Տեսուչ Հագ. Տ. Յակոբ Վրդ. Ի հետ:

Ուսանողաց Վարժարան իբրեւ ժառանգաւոր սան եւ յաջողութեամբ կ'աւարտէ իր ուսման շրջանը:

Տրց. Յովհաննէս Յովհաննէսեան: Մնած է Հայրիկ 1945 ին: Պաղեստինի դեպքերուն ընթացիկը կը փոխադրուի Պէյրութ, ուր իր նախնական կրթութիւնը կը ստանայ Աբգարեան եւ Կիլիկեան վարժարաններուն մէջ: Այս վերջնոյն աւարտական դասարանի առաջին եւսման տարիէն ինքնուրուի կ'ընդունուի յաջողութեամբ աւարտելէ ետք, նախապէս դիմած

Տրց. Դարրիէլ Թաշնեան: Մնած է Պէյրութ 1947 ին: Նախնական կրթութիւնը ստացած է Պէյրութի Ս. Քառասնից Մանկանց եւ Հանրին Կենաց վարժարաններուն մէջ. այս վերջնոյն Ե. դասարանը աւարտելէ ետք, 1960 Նոյեմբերին կ'ընդունուի Նուսահեմի Ժառանգաւորաց Վարժարան, որու շրջանը յաջողութեամբ կ'աւարտէ:

Տրց. Եղիա Պալիօզեան: Մնած է Հալէպ 1946 ին: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Բէքէլ վարժարանին մէջ, որու շրջանը յաջողութեամբ աւարտելէ ետք 1961 ին, նոյն տարին կ'ընդունուի Նուսահեմի Ժառանգաւորաց Վարժարան, որու շրջանը յաջողութեամբ կ'աւարտէ:

ըլլալով, կ'ընդունուի Նուսահեմի Ժառանգաւորաց Վարժարան որուն ընթացքը կ'աւարտէ յաջողութեամբ:

Տրց. Վարդան Գարանեան: Մնած է Հալէպ 1946 ին: Նախնական կրթութիւնը կը ստանայ Հալէպի Զաւարեան Ազգային Վարժարանին մէջ, եւ Ե. դասարանը յաջողութեամբ աւարտելէ ետք կ'ընդունուի Նուսահեմի Ժառանգաւորաց Վարժարան 1960 ին, որուն բառամեայ շրջանը յաջողութեամբ կ'աւարտէ: